ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԸ ՄԵՐ ԼԵԶՒՈՒՄ

(Պր. Ս. Մալխասեանի քերակ. ձեռնարկի առիթով)

Վաղուց արդէն յայտնի է, որ երկբարբառ ասածը՝ քանի տառով կուզի հնչիւնագրուի, բնութեամբ անբաժանելի է, երբ է մի ձուլուած մի բաղադրեալ հնչիւն, իսկ եթէ այդպէս չէ, այլ բաժանելի, նա երկբարբառ չէ։ Մխիթարեանք իրանց քերականութիւններում մեր աւ, եւ, իւ, ով բառամասերը համարել են երկբարբառ, և որովհետև երկբարբառն անբաժանելի է, այս պատճառով այս բնութեամբ իրարից բաժանելի հնչիւնները բնութեամբ անբաժանելի են չինել և պատուիրել վանկելու այսպէս—հիւ-անդ, դիւ-ական, թեւ-ով, ձեւ-աւոր, հաւ-ատալ, հաւ-ասար, ծով ային, հոգեւ-որ։ Ահա թէ ինչ կը նշանակէ բանը գլխիվայր ըմբռնել։ Շրջեցէք կրկին անգամ, և իսկոյն կերևի բնականը և ուղիղը։ Կարդացէք աջից ձախ նրանց այդ երկբարբառները և կը ստանաք ուղիղ անբաժանելիներ, ինչպէս՝ ւա, ւե, ւէ, ւը, ւի, ւո կամ վո, ւու կամ վու, ւօ։ Ահա սրանք են, որ բնութեամբ անբաժանելի են, ինչպէս—հի-ւանդ, դի-ւական, ա-ւերակ, յա-ւէտ, թի-ւըն, յա-ւիտեան, հոգե-ւոր, սո-վոր, ա-ւուր, ժողո-վուրդ, առա-ւօտ։

Նկատեցէք ուշի ուշով, և կը տեսնէք, որ անբաժանելի բառամասերի մէջ բաղաձայն հնչիւններն սկիզբն են ընկնում, իսկ պարզ ձայնաւորները՝ վերջը։ Եթէ հակառակը լինի՝ նա բաժանելի է։ Այսպէս ով—բաժանելի է, իսկ վո կամ ւո-անբաժանելի։

Այս կանոնին ենթարկւում են և բուն երկբարբառները, որպիսիք են—Ե, եա, եօ, եու (որ հնումը գրւում էր իւ, իսկ այժմ յու)։ Սրանցում էլ կիսաձայնաւորը կամ կիսաբաղաձայնն սկիզբն է ընկնում, իսկ պարզ ձայնաւորը՝ վերջը, հակադարձ եղածը բաժանելի է, ինչպէս եա՝ անբաժանելի է, իսկ ոյ—բաժանելի։

Բաժանելի և անբաժանելի լինելն իմանալու համար մեր լեզուի մէջ մի գեղեցիկ, պարզ և կարճ օրէնք կայ, և այդ օրէնքն այս է. Ամեն բաղաձայն և կիսաբաղաձայն իր յաջորդ ձայնաւորից անբաժանելի է։

Ուշադրութեան առէք այս օրէնքի մէջ «ամէն բաղաձայն» ասուածը։ Ուրեմն անբաժանելի են ոչ միայն ւա, ւե. ւէ և այլն, այլ նաև թա, թե, թի, նա, նե, նի, և առ հասարակ բոլոր բաղաձայնները անբաժանելի են իրանց յաջորդ ձայնաւորներից։ Իսկ սրանից ինչ է դուրս գալիս,— այն, որ ւա, իւ, և այլն երկբարբառ չեն, որովհետև դրանց բաղադրական մասերը բաժանւում են, բայց ւա՝ ւէ, և այլն նոյնպէս երկբարբառ չեն, որովհետև թէպէտ այդ ձայները չեն բաժանւում, բայց այդ հանգամանքը լեզուի ընդհանուր օրէնքիցն է բղխում, վերաբերում է բոլոր բաղաձայններին, և ոչ մասնաւոր հնչիւնների առանձին յատկութեանը։ Ուրեմն մեր լեզուի մէջ՝ բնական տեսակէտից՝ չը կայ երկբարբառ հնչիւն, այլ կայ միայն մէկ հատ կիսաբաղաձայն կամ կիսաձայնաւոր եը (ĕ), ինչպէս՝ եա=ĕա, եու=ĕու։ Այս կիսաձայնաւոր եըն մեզանում երեք տառով են նշանագրում՝ ե, է և յ տառերով, թէև հնչիւնը միևնոյնն է։ Ի հարկէ, սա մի գրական անկատարութիւն է միայն.

Գ. Մալխասեանի նոր հրատարակած ձեռնարկի 11-դ երեսում և 23-դ յօդուածում տպած է հետևեալը.

«Վերջին բաց վանկ կազմող իւ (իվ) երկբարբառը շեշտը կորցնելիս դառնում է ու. օր. թիւ—թուով, թուել, անիւ—անուով, տիւ—տուի, տուէ, վաղիւ—վաղուեան և այլն»։

Այսպէս ահա պարոնն ընդունում է, որ բառերի վերջում իւը ե ր կ բ ա ր բ ա ռ է և բ ա ց վանկ, այսինքն ձ ա յ ն ա ւ ո ր. և սրա համար է, որ այդ իւը հոլովականում դառնում է ու։ Իսկ եթէ փ ա կ վանկ լինէր այդ իւը, այսինքն՝ ոչ երկբարբառ և ձայնաւոր, այլ բաղաձայն, արդեօք այն ժամանակ էլ դա կը դառնար ու—Ո՛չ։ Այդ արդէն ինքը ցոյց է տալիս 18-դ յօդուածում, որ է հետևեալը.

«ի և ու ձայնաւորները, որոնք գտնւում են բառի վերջի փ ա կ վանկում, շեշտը կորցնելիս՝ փոխւում են ը, որ շատ անգամ սղւելով՝ բոլորովին անհետանում է, օր. գին—գընով—գնով. սիրտ—սըրտի—սրտի. Դաւիթ—Դաւ.թի, գաւիթ—գաւ.թի...»։

Ուրեմն բառերի վերջերում՝

ի+ամէն բաղաձայն=ը (զէրօ)+...

ի+ւ կամ վ=ու+...

Այս եզրակացութեանը հասնելու համար պարոնն ուզեցել է տրամաբանօրէն վարուել, մտածելով այսպէս. «եթէ փակ վանկերում ի տառը սղւում է, ապա ուրեմն իւ (իվ) վերջաւորութեան մէջ ևս պէտք է սղուի այդ ին, բայց որպէս զի իւ-ն ու դառնալը ուղիղ համարենք, եկ ասենք դա երկբարբառ է և բաց վանկ»։ Մենք տեսնում ենք գրած թը—ւոյ, թըւով և մինչև թվին, թվական, որ Մխիթարեանները համարում են ռամկական, ըստ որում ինչ որ բնական է, այն դրանց համար ռամկական է։ Տեսնում ենք՝ քիւ—քըւոյ, և քըւի, այլ և՝ քւոյ, քւի (տես այս բառը

Հայկազեան բառարանում)։ Վերջապէս տեսնում ենք, որ այդ կարգի բառերը մեր նախնիք գրել են ոչ միայն ը-ով և ու-ով, ոչ միայն ազելով, այլ և վ-ով, և ւ ով։ Եւ այս նրա համար որ ըւ և ու մօտաւոր ձայներ են, իսկ ւ և վ՝ նոյնահնչիւն գրեր։ Որքան ուղեցել են այդ գրերը ջոկ ջոկ հնչիւն համարել, ոլքան աշխատել են դրանցից մէկը ձայնաւոր չինել և միւսը բաղաձայն—չեն կարողացել իրանց նպատակին հասնել։ Այսպիսի մի տանջանքի մէջ են այսօր և մեր աշխարհիկ լեզւով գրողներից շատերը, որոնց կարգն է ընկել և պ. Մալխասեանը։

Այս տարի Ներսիսեան դպրոցում տիրապետում էր երեք տեսակ ուղղագրութիւն—Պռօշեանցը սովորեցնում էր իր պոչաւոր ըւ-ն և ու-ն, Աբիլեանը՝ ւ և ու, իսկ Մալխասեանը իբրև նոր լեզւագէտ՝ վ։ Արդ ինչպէս է եղել, որ իր ձեռնարկում հրապարակ է եկել ււինի և ուի պոչից միատեղ բռնած։ Չէր կարելի արդեօք մի կանոն էլ դրա համար թխել. օրինակ այսպիսի—«Ձուխտ ու-երից առաջինը դառնում է ւ, օր. ասւում, ասուել, Թւում, Թուել, կատուի, կատւում, Բագուի, Բագւումը, լեզուի, լեզւումը, տուել, տւութիւն», և ապացոյց էլ կը բերէր, որ այդպէս են գրել մեր՝ 19-դ դարի՝ Ն ա՛ խ ն ի ք ը...

Դ. Ա.